



European Training Foundation



EUROPEAN TRAINING FOUNDATION

Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության հայկական մոդելի՝ «ՆՄԿՈՒ հաստատության կողմից առեվտրային գործունեության իրականացվելիության գնահատում» հետազոտության հիմնական դրույթներ

Արայիկ Նավոյան



ԱՅՈՒ ԳԾՈՎ 2020-2021ԹԹ. ԻՐԱՎԱՆՍՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Չորեքշաբթի, 12-ը մայիսի 2021թ.
Zoom հարթակ





European Training Foundation

ԱՐՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Եվրոպական կրթական հիմնադրամի
աջակցությամբ 2019թ. մշակվեց և
Մասնագիտական կրթության զարգացման
ազգային խորհրդի կողմից հաստատվեց
«Հայաստանում աշխատանքի վրա հիմնված
ուսումնառության (ԱՐՈՒ) զարգացման
հայեցակարգ և 2019-2025թթ. գործողությունների
ցանկ» փաստաթուղթը

ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՀՈՒ ՁԵՎԵՐԸ

Չայեցակարգը նախատեսում է ՆՄԿՈՒ համակարգում ԱՀՈՒ տարբեր ձևերի ժամանակի ընթացքում աստիճանական ներդնում և զարգացում.

- Գործող պրակտիկայի համակարգի բարելավում - (ԱՀՈՒ 1-ին ձև),
- «ԱՀՈՒ հայկական մոդելի»՝ ՆՄԿՈՒ հաստատությանը կից «իրական» ձեռնարկությունների ստեղծում (ԱՀՈՒ 2-րդ ձև)
- Աշկերտության (դուլալ) կրթության ներդնում (ԱՀՈՒ 3-րդ ձև):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Հետազոտության նպատակն է սահմանել ԱՅՈԼ հայեցակարգով նախատեսված ԱՅՈԻ 2-րդ ձևի՝ ՆՄԿՈԻ հաստատությանը կից առևտրային կազմակերպության իրավական, տնտեսական և մանակավարժական շրջանակն ու դրա ներդրմանն անհրաժեշտ պայմանները:
- Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է ԱՅՈԻ 2-րդ ձևին առընչվող տարբեր բաղադրիչների՝ կազմակերպական-իրավական տեսակի, մանկավարժական և վարչական կազմակերպման ու տնտեսական գործունեության իրականացվելիության ուսումնասիրությունը:
- Տնտեսական գործունեության իրականացվելիությունը գնահատվել է նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության «Գինեգործություն» մասնագիտության օրինակով՝ Վայոց-ձորի տարածաշրջանային պետական քոլեջի համատեքստում:

ԱՀՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՆԱՊԱՏԱԿԸ

- Ստեղծել պայմաններ ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության ու վաճառքի միջոցով ուսանողներին ներգրավելու աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մեջ՝ ապահովելու կոնկրետ մասնագիտության գծով պահանջվող անհրաժեշտ մասնագիտական և անձնական հմտություններ ունեցող մասնագետների պատրաստումը:
- Տնտեսական գործունեությունից ստացված շահույթը օգտագործել ՆՄԿՈՒ հաստատության պայմանները բարելավելու և/կամ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելու համար:

ԱՀՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՆԱՊԱՏԱԿԸ-2

- ՆՄԿՈՒ հաստատության աշխատակիցներին հնարավորություն տալ մասնակցել ծառայությունների մատուցման կամ ապրանքի արտադրության ու վաճառքի գործընթացներին և ստանալ լրացուցիչ եկամուտներ:
- Նպաստել ՆՄԿՈՒ հաստատության աշխատակիցների մասնագիտական հմտությունների շարունակական բարելավմանը:
- Աջակցել պետության կողմից կոնկրետ տարածաշրջանում առաջնահերթ համարվող մասնագիտությունների և դրանց առընչվող հարակից մասնագիտությունների գծով որակյալ մասնագետների պատրաստմանը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանի օրենսդրությունը ՆՄԿՈՒ հաստատություններին ընձեռում է տնտեսական գործունեությամբ զբաղվելու կազմակերպա-իրավական հետևյալ հիմնական տարբերակները.

- Ձբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներով:
- Ստեղծել առանձին տնտեսական (առևտրային) ընկերություն՝ ՍՊԸ կամ ԲԸ :
- Հիմնադրի որոշմամբ վերակազմակերպվել պետական ՓԲԸ :
- Հիմնադրի որոշմամբ վերակազմակերպվել հիմնադրամի :

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՀՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՐԱ

ԱՀՈՒ իրականացման պայմաններ	Տնտեսական գործունեության կազմակերպական-իրավական տարբերակների ազդեցությունը			
Տնտեսական գործունեության արդյունավետ իրականացմանն անհրաժեշտ շահեկիցների իրական ներգրավում:	Ձեռնարկատիրական գործունեություն ՊՈԱԿ շրջանակում	Տնտեսական գործունեություն ստեղծված առանձին ՍՊԸ կամ ԲԸ շրջանակում	Տնտեսական գործունեություն պետական ՓԲԸ շրջանակում	Տնտեսական գործունեություն հիմնադրամի շրջանակում
<p>ՊՈԱԿ շրջանակում ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության գործընթացներին ՆՄԿՈԸ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի ցածր ներգրավվածություն՝ պայմանավորված լրացուցիչ վարձատրության տրամադրելու դժվարություններով և նրանց՝ գոյացած շահույթից մաս ստանալու օրենսդրական կարգավորման դժվարություններով :</p>	<p>Ընկերությունում ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության աշխատանքներին ՆՄԿՈԸ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի մասնակի ներգրավվածություն՝ պայմանավորված երկու տարբեր կազմակերպություններում աշխատանքային իրավահարաբերությունները կանոնակարգելու դժվարություններով և նրանց՝ գոյացած շահույթից մաս ստանալու օրենսդրական կարգավորման դժվարություններով :</p>	<p>ՆՄԿՈԸ հաստատություն-ՓԲԸ դասախոսական և վարչական անձնակազմի ուղղակի մասնակցություն ԱՀՈՒ նպատակով տնտեսական գործունեության իրականացմանը և նրանց՝ ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության աշխատանքների դիմաց վարձատրության հնարավորությամբ պայմանավորված շահագրգռվածություն :</p>	<p>ՆՄԿՈՒ հաստատություն- հիմնադրամի դասախոսական և վարչական անձնակազմի ուղղակի մասնակցություն ԱՀՈՒ նպատակով տնտեսական գործունեության իրականացմանը և նրանց՝ ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության աշխատանքների դիմաց վարձատրության հնարավորությամբ պայմանավորված շահագրգռվածություն:</p>	

ԱՅՈՒ իրականացման պայմաններ	Տնտեսական գործունեության կազմակերպական-իրավական տարբերակների ազդեցությունը			
Տնտեսական գործունեության արդյունավետ իրականացման անհրաժեշտ շահեկիցների իրական ներգրավում:	ՊՈԱԿ շրջանակում	ՍՊԸ կամ ԲԸ շրջանակում	Պետական ՓԲԸ շրջանակում	Յիմնադրամի շրջանակում
ՆՄԿՈՒ հաստատության դասախոսական վարչական անձնակազմի մասնագիտական հմտությունների շարունակական զարգացում	Ձեռնարկատիրական գործունեության մեջ ցածր ներգրավածության և թույլ մոտիվացիայի պատճառով ՆՄԿՈՒ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացման ինդիկսներ :	Տնտեսական գործունեության մեջ մասնակի ներգրավածության և մոտիվացիայի պատճառով ՆՄԿՈՒ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացման դժվարություններ :	Որակյալ ծառայության կամ արտադրված ապրանքի վաճառքից գոյացած շահույթից մաս ստանալու մոտիվացիան որպես հիմք ՆՄԿՈՒ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական հմտությունների շարունակական զարգացման համար :	Որակյալ ծառայության կամ ապրանքի վաճառքից գոյացած շահույթից մաս ստանալու անհնարինությամբ պայմանավորված ձեռնարկատիրական գործունեության մեջ ցածր ներգրավածության և թույլ մոտիվացիայի պատճառով ՆՄԿՈՒ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացման ինդիկսներ :

ԱՅՈՒ պայմաններ	Տնտեսական գործունեության կազմակերպական-հրավական տարբերակների ազդեցություն			
	ՊՈԱԿ շրջանակում	ՍՊԸ կամ ԲԸ շրջանակում	Պետական ՓԲԸ շրջանակում	Հիմնադրամի շրջանակում
<p>ՆՄԿՈԼ հաստատության կանոնադրական նպատակներին համարժեք տնտեսական գործունեության մոդել և հարկային միջավայր</p>	<p>- Ձեռնարկատիրական գործունեության շրջանակում կոնկրետ մասնագիտությունների գծով ՆՄԿՈՒ հաստատության կրթական գործընթացը և ԱՅՈՒ անհրաժեշտ տնտեսական գործունեության միասնական կազմակերպման և համակարգման հնարավորություն : - Ապրանքի կամ ծառայության վաճառի թույլտվության բացակայությունը սահմանափակում է ձեռնարկատիրական գործունեության տեսակները:</p>	<p>- Առանձին ընկերության շրջանակում կոնկրետ մասնագիտությունների գծով ՆՄԿՈՒ հաստատության կրթական գործընթացը և դրա շրջանակում ԱՅՈՒ անհրաժեշտ տնտեսական գործունեության միասնական կազմակերպման և համակարգման հնարավորություն :</p>	<p>- Մեկ ընկերության շրջանակում կոնկրետ մասնագիտությունների գծով կրթական գործընթացը և դրա շրջանակում ԱՅՈՒ անհրաժեշտ տնտեսական գործունեության միասնական կազմակերպում և համակարգում : - ՆՄԿՈԼ հաստատություն-ՓԲԸ վարչական և դասախոսական անձնակազմի գործառնությունները սահմանվում են հիմք ընդունելով ընկերության տնտեսական գործունեության ուղղությունները :</p>	<p>- Հիմնադրամի շրջանակում կոնկրետ մասնագիտությունների գծով կրթական գործընթացը և դրա շրջանակում ԱՅՈՒ անհրաժեշտ ձեռնարկատիրական գործունեության միասնական կազմակերպում և համակարգում :</p>

ԱՅՈՒ իրականացման պայմաններ	Տնտեսական գործունեության կազմակերպական-իրավական տարբերակների ազդեցությունը			
	ՊՈԱԿ շրջանակում	ՍՊԸ կամ ԲԸ շրջանակում	Պետական ՓԲԸ շրջանակում	Յիմնադրամի շրջանակում
ՆՄԿՈՒ հաստատության կանոնադրական նպատակներին համարժեք տնտեսական գործունեության մոդել և հարկային միջավայր	<ul style="list-style-type: none"> - ՆՄԿՈՒ հաստատությունում ոչ առևտրային և առևտրային գործունեությունների հաշվապահական հաշվառման դժվարություններ: - Ոչ առևտրային և առևտրային գործունեությունների իրականացման նպատակով վարչական ու դասախոսական անձնակազմի գործառույթների վերանայման ու վերաբաշխման դժվարություններ: 	<ul style="list-style-type: none"> - Ընկերության տնտեսական գործունեության մեջ ՆՄԿՈՒ հաստատության վարչական ու դասախոսական անձնակազմի ներգրավման նպատակով նրանց գործառույթների վերանայման ու վերաբաշխման դժվարություններ: - Առանձին ընկերության շրջանակում առևտրային կազմակերպություններին վերաբերվող հարկային հաշվառում: 	<ul style="list-style-type: none"> - Առանձին ընկերության շրջանակում առևտրային կազմակերպություններին վերաբերվող հարկային հաշվառում: - Սահմանված ամենամյա տեղերի շրջանակում անվճար կրթության տրամադրման պարտավորության ամրագրման անհրաժեշտություն: 	<ul style="list-style-type: none"> - ՆՄԿՈՒ հաստատություն-հիմնադրամի վարչական և դասախոսական անձնակազմի գործառույթները սահմանվում են հիմք ընդունելով հիմնադրամի տնտեսական գործունեության ուղղությունները : - Յիմնադրամի շրջանակում ձեռնարկատիրական գործունեության հարկային հաշվառում:
<p>Պետության կողմից ԱՅՈՒ արդյունավետ իրականացման համար տնտեսական գործունեությանն անհրաժեշտ հիմնական միջոցների ձեռք բերման գծով հարկային և մաքսային արտոնությունների սահմանման անհրաժեշտությունը՝ որպես պետության կողմից ԱՅՈՒ զարգացման խրախուսում :</p>				

ԱՅՈՒ իրականացման պայմաններ	Տնտեսական գործունեության կազմակերպական-իրավական տարբերակների ազդեցությունը			
	ՊՈԱԿ շրջանակում	ՍՊԸ կամ ԲԸ շրջանակում	Պետական ՓԲԸ շրջանակում	Յիմնադրամի շրջանակում
ՆՄԿՈՒ հաստատությունում կրթական գործընթացի կազմակերպում	ՆՄԿՈՒ հաստատությունում կրթական գործընթացի վերանայման անհրաժեշտություն՝ ձեռնարկատիրական գործունեությունը ԱՅՈՒ նպատակով ծառայեցնելու համար:	ՆՄԿՈՒ հաստատության կրթական գործընթացի վերանայման անհրաժեշտություն՝ հիմք ընդունելով հաստատությանը կից առտրային ընկերության տնտեսական գործընթացների շրջափոխելը:	Ուսումնական և տնտեսական գործունեության գործընթացների միասնական կազմակերպման և կառավարման շնորհիվ լսարանում ու աշխատավայրում ուսումնառության արդյունավետ համադրման հնարավորություն:	ՆՄԿՈՒ հաստատությունում կրթական գործընթացի վերանայման անհրաժեշտություն՝ ձեռնարկատիրական գործունեությունը ԱՅՈՒ նպատակով ծառայեցնելու համար:
ՆՄԿՈՒ մասնագիտությունների մոդուլային և ծրագրերի ուսումնական պլանների վերանայում:	ԱՅՈՒ իրականացման նպատակով տնտեսական գործունեության կազմակերպական-իրավական տարբերակը ՆՄԿՈՒ մասնագիտությունների մոդուլային ծրագրերի և ուսումնական պլանների՝ ըստ ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության գործընթացների վերանայման վրա էական ազդեցություն չունի:			

ԱՀՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿԸ

Վերոնշյալ պայմանների ապահովման տեսակետից որպես
առավել հարմար կազմակերպա-իրավական տեսակ
առաջարկվում է հիմնադրամի իրավաբանական անձի տեսակը:

ՆՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Կազմակերպա-իրավական բոլոր տարբերակների դեպքում ԱՅՈՒ իրականացման նպատակով շահավետ տնտեսական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է ունենալ անհրաժեշտ մասնագիտական ու կառավարչական գիտելիքներ ունեցող աշխատակիցներ՝ որպես որակյալ ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության գրավական:
- Հաստատության աշխատակիցներին մոտիվացնելուց բացի անհրաժեշտ է իրականացնել ՆՄԿՈՒ հաստատության դասախոսական և վարչական անձնակազմի ԱՅՈՒ նպատակով ծառայությունների մատուցման կամ ապրանքի արտադրության ու վաճառքի շրջանակում դասավանդման ու գնահատման մոտեցումների գծով վերապատրաստումներ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

ՆՄԿՈՒ հաստատության կողմից ԱՅՈՒ նպատակով ծառայության մատուցման կամ ապրանքի արտադրության շրջանակում ուսանողների գործնական ուսուցումը ենթադրում է կրթական գործընթացի և մոտեցումների վերանայում:

Վերանայումը մանսավորապես վերաբերվում է.

- Կոնկրետ մասնագիտության գծով պետական կրթական չափորոշիչին, որտեղ սահմանվում են ԱՅՈՒ իրականացմանն անհրաժեշտ նվազագույն պայմանները:
- Մասնագիտության ուսումնական պլանին և մոդուլային ծրագրին, որոնք ներառում են ԱՅՈՒ՝ հիմք ընդունելով ծառայության մատուցման կամ ապրանքի թողարկման ու վաճառքի գործընթացը և դրա շրջափուլերը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ - 2

- Աշխատավայրում ուսուցման և ուսումնառության կազմակերպման ընդհանուր շրջանակին, ըստ դասավանդման մոդուլների աշխատավայրում աշխատանքների հիման վրա գործնական ուսուցմանը, գործնական ուսուցման աշխատանքների տարեկան ժամանակացույցին և դրանց ռոտացիային ըստ արտադրական ցիկլերի ու վայրերի:
- ՆՄԿՈՒ հաստատության մանկավարժական ու վարչական անձնակազմի կողմից ԱՅՈՒ կազմակերպմանն անհրաժեշտ աջակցությանը:
- ԱՅՈՒ որակի ապահովմանը, ներառյալ ՆՄԿՈՒ հաստատությունում և ընկերությունում սահմանափած ուսումնառության վերջնարդյունքների գնահատումը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ - 3

Կրթական գործընթացի վերանայման համար լավ հիմք է հանդիսանում միջազգային դոնոր կազմակերպությունների՝ մասնավորապես GIZ և Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ կողմից իրականացված նախագծերի փորձառությունը և ձեռք բերված արդյունքները:

ՆՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

ԱՅՈՒ հայկական մոդելի շրջանակում ծառայությունների մատուցման և արտադրական գործունեության ու վաճառքների առավելագույն ծավալները որոշվում են հիմք ընդունելով ըստ ոլորտների ԱՅՈՒ արդյունավետ տրամադրմանն անհրաժեշտ ծառայությունների մատուցման կամ աապրանքի արտադրությանն անհրաժեշտ ներդրումների չափը և դրանց փոխհատուցման ժամկետները:

ՆՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

- ԱՅՈՒ հայկական մոդելի ընկերությանների և հիմնադրամների համար առանձին հարկային ու մաքսային արտոնությունների սահմանում չի նախատեսվում:
- Այն դեպքում, երբ գործունեությունը պահանջում է հիմնական միջոցների մեծ ներդրումներ, առաջարկվում է արտադրական միջոցների ներմուծման դեպքում սահմանել ավելաված արժեքի հարկի և մաքսատուրքի գծով արտոնություն:
- Նման մոտեցումը թույլ կտա առանց տնտեսական ազատ մրցակցությունը խաթարելու նպաստել ԱՅՈՒ միջոցով ՆՄԿՈՒ հաստատությունների կանոնադրական նպատակների արդյունավետ իրականացմանը :

ՆՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

- ԱՅՈՒ հայկական մոդելի առանձին ընկերության կամ ՆՄԿՈՒ հիմնադրամի արտադրանքի սպառման կամ ծառայությունների մատուցման ծավալների մեծացմանն անջակցելու նպատակով անհրաժեշտ է պետության մակարդակով ապահովել ոչ-ֆինանսական խրախուսում:
- Մասնավորապես հնարավոր է երկրի մաշտաբով արժևորել ներգրավված հաստատությունների աշխատանքը և հանրահռչակել նրանց արտադրանքը կամ ծառայությունը:
- Հնարավոր է նաև դիտարկել ՆՄԿՈՒ հաստատությունների արտադրանքը կամ ծառայությունը պետության կարիքների համար գնելու տարբերակը:

ԱՀՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

- Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կրթության համակարգում, մասնավորապես բարձրագույն կրթության հաստատությունների պարագայում արդեն ներդրվել է հիմնադրամի իրավաբանական անձի կարգավիճակը, նպատակահարմար է սկզբնամական շրջանում ԱՀՈՒ հայկական մոդելի պիլոտային ներդրումը իրականացնել ընտրված հաստատությունների ՊՈԱԿ իրավաբանական անձի տեսակը հիմնադրամի վերակազմակերպելու միջոցով:

ԱՀՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վայոց-ձորի տարածաշրջանային պետական քոլեջի օրինակով ԱՀՈՒ հայկական մոդելի արդյունավետ պիլոտային ներդրման համար անհրաժեշտ են հետևյալ կոնկրետ աշխատանքները.

- ՆՄԿՈՒ հաստատության ՊՈԱԿ իրավաբանական անձի՝ հիմնադրամի վերակազմակերպման մասին ՀՀ կառավորության որոշման պատրաստում և ընդունում:
- Գինու արտադրության ներկայացված տնտեսական մոդելի՝ համատեքստի պայմաններին համարժեք թարմացում և բիզնես պլանի կազմում.
 - հետազոտությունում ներկայացված ներդրումների ու ծախսերի հաշվարկների մանրամասնում
 - մարքեթինգային և զարգացման պլանի կազմում՝ հիմք ընդունելով հետազոտությունում առաջարկված ռազմավարության դրույթները
 - հիմնադրամի աշատակիցների գործառույթների վերանայում
 - քոլեջի դասախոսների՝ ԱՀՈՒ կազմակերպմանն անհրաժեշտ մանկավարժական մոտեցումների գծով վերապատրաստումների պլանավորում:

ԱՀՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-2

- Հիմնադրամի շրջանակում ձեռնարկատիրական գործունեությանն անհրաժեշտ հիմնական միջոցների ու շրջանառու միջոցների ֆինանսավորման նպատակով միջազգային դոնոր կառույցներից ներդրումների ներգրավման առաջարկի պատրաստում և ներկայացում :
- Ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկություններին ու ժամկետներին համարժեք մանկավարժական մոտցումների և գործիքակազմի վերանայում:
- Հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեության պահանջներին համարժեք ԱՀՈՒ միջոցով դասավանդման ու գնահատման մոտեցումների և գործիքների գծով վերապատրաստումների կազմակերպում:

ԱՀՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 3

ԱՀՈՒ ուղեցույցի կազմում, որը թույլ է տալիս.

- Համախմբել կոնկրետ մասնագիտության գծով ԱՀՈՒ ակրնկալվող վերջնարդյունքները և դրանց ստացմանն անհրաժեշտ մոտեցումներն ու գործիքակազմը:
- ՆՄԿՈՒ հաստատության մանկավարժական և վարչական անձնակազմին՝ ուսանողի կրթությունն ու ակադեմիական առաջընթացը կազմակերպել աշխատավայրում գործնական ուսուցման աշխատանքներին համարժեք, ունենալ աշխատավայրում ուսանողի ուսումնառությանը հետևելու և գնահատելու գործիքներ, աջակցել ընկերությանը ԱՀՈՒ իրականացման ընթացքում:
- Ծառայության մատուցման ու ապրանքի արտադրության մեջ ներգրավված անձանց՝ աշխատավայրում ուսանողին հանձնարարվող աշխատանքները բաշխել ըստ ուսումնառության սահմանված վերջնարդյունքների և ստանալ մանկավարժական ու կազմակերպչական աջակցություն տրամադրվող գործնական ուսուցման ընթացքում:
- Ուսանողին՝ գործուն մասնակցություն ունենալ ուսումնառության գործընթացում:

Website

www.etf.europa.eu

Twitter

[@etfeuropa](https://twitter.com/etfeuropa)

Facebook

facebook.com/etfeuropa

YouTube

www.youtube.com/user/etfeuropa

Instagram

instagram.com/etfeuropa/

LinkedIn

linkedin.com/company/european-training-foundation

E-mail

info@etf.europa.eu



European Training Foundation

